

4.

ՉԳԱՅՈՒՄԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

MORAL SENSE THEORY

Ի՞նչ է՝ **զգացումը** եւ ի՞նչ է՝ **զգացումի բարոյագիտութիւնը**:

«Բարոյական Հիմնական Հասկացութիւններ»-ու (Մաս – 9) շարքին, յօդուածի մը մէջ, որոշ մանրամասնութեամբ յիշուած են նաեւ՝ *զգացումներն* (Feeling) ու *յոյզերը* (Emotion), տե՛ս էջ 453: Այդտեղ յիշուած է, որ մարդու զգացական աշխարհը բարդ ու խորին համալիր մըն է: Այդ աշխարհին մաս կը կազմեն նաեւ՝ *յոյզերը*, որոնք զգացական գրգիռներ են՝ արտաքին աշխարհին համար տեսանելի կամ անտեսանելի: Եւ այդ յոյզերն են, որոնք մարդու մօտ կը յառաջացնեն՝ ենթակայական (Subjective) զանազան *զգացումներ*, որոնք կարելի է բաժնել երկու խումբերու.-

- **Հաճելի զգացումներ** (Euphoria), ինչպէս օրինակ՝ ուրախութիւն, հաճոյք, ոգեւորութիւն, բարձր տրամադրութիւն... եւ
- **Տհաճ զգացումներ** (Dysphoria), ինչպէս օրինակ՝ տխրութիւն, տառապանք, ցաւ, ընկճուածութիւն, ցած տրամադրութիւն....:



Չզացումի բարոյագիտութեան (անգլ.՝ Moral Sense Theory, գերմ.՝ Gefühls-ethik) պարագային, բարոյական արժեւորման որպէս ելակէտ կը նկատուին՝ մարդկային վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի զգացումները, ինչպէս օրինակ՝ *համակրանքը* կամ *կարեկցութիւնը*:

Պարտագիտական, նպատակաբանական եւ առաքինութեան բարոյագիտութեան տեսութիւններէն ետք, այս չորրորդ տեսութիւնը (*Չզացումի բարոյագիտութիւնը*), իր բարոյական արժեւորման մէջ, առաջնահերթ չի նկատեր մարդկային վարմունքները (ինչպէս առաջին տեսութեան պարագային) կամ այդ վարմունքներու հետեւանքները (ինչպէս երկրորդ տեսութեան պարագային) կամ այդ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի նկարագիրը (ինչպէս երրորդ տեսութեան պարագային), այլ բարոյական արժեւորման ելակէտ եւ հիմք կ'ընդունի անհատի կամ ենթակայի զգացումները:

Արեւմտեան փիլիսոփայութեան մէջ բարոյագիտական այս չորրորդ տեսութիւնը կը յայտնուի Նոր Դարաշրջանի (Լուսաւորութեան = Enlightenment) ընթացքին: Եւրոպայի մէջ, *զգացումի բարոյագիտութեան* գլխաւոր դէմքերը կը նկատուին՝ սկոթլանտացի հոգեբան ու փորձապաշտ փիլիսոփայ **Դ. Հյում** (David Hume, 1711 – 1776 թ.) եւ գերման գաղափարապաշտ փիլիսոփայ **Ա. Շոպենհաուր** (Arthur Schopenhauer, 1788 – 1860 թ.):